

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄԱՎՈՐՈՒՄ

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 88-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների համաձայն: Նախագիծը մշակելիս հաշվի է առնվել բյուջեի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից տրված տեղեկանքը:

Համայնքի վարչական բյուջեի եկամտային մասից երաժշտական դպրոցին հատկացվելիք սուբվենցիայի գումարից նվազեցվել է 107 800 ՀՀ դրամ, որը նվազեցվել է նաև գործառնական բնագավառի (09-5-1) 4511 տնտեսագիտական հոդվածից:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամտային մասին կապիտալ սուբվենցիա է ավելացվել 7 138 600 ՀՀ դրամի չափով:

Համայնքի ֆոնդային բյուջեի հողի օտարումից եկամուտները ավելացվել է 40 մլն. ՀՀ դրամով:

Համայնքի ֆոնդային բյուջեի գործառնական բնագավառի (09-1-1) 5113 տնտեսագիտական հոդվածից նվազեցվել է 265 մլն. ՀՀ դրամ:

Համայնքի ֆոնդային բյուջեի գործառնական բնագավառի (09-5-1) 5113 տնտեսագիտական հոդվածից նվազեցվել է 5 մլն. ՀՀ դրամ:

Համայնքի ֆոնդային բյուջեի գործառնական բնագավառի (04-5-1) 5113 տնտեսագիտական հոդվածին ավելացվել է 147 138 600 ՀՀ դրամ:

Համայնքի ֆոնդային բյուջեի գործառնական բնագավառի (06-4-1) 5113 տնտեսագիտական հոդվածին ավելացվել է 90 մլն. ՀՀ դրամ:

Համայնքի ֆոնդային բյուջեի գործառնական բնագավառի (08-1-1) 5113 տնտեսագիտական հոդվածին ավելացվել է 80 մլն. ՀՀ դրամ:

Վերը նշված փոփոխության արդյուքում համամասնությունն ապահովելու նպատակով, անհրաժեշտություն է առաջացել Աշտարակ համայնքի ավագանու կողմից 24.12.2020թ. թիվ 88-Ն որոշմամբ հաստատված Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 1-6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

Համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի բյուջեն կրում է նորմատիվ բնույթ, ուստի նրա մեջ կատարվող փոփոխության նախագիծը ևս պետք է կրի նորմատիվ բնույթ: